**ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Իրանը բաներ էին պահանջում, որ մենք չէինք անում**

15 նոյեմբեր, 2005 թ.

**-Պարոն Լիպարիտյան, եթե մեզանում որոշներն այն օրերին համարվում էին ներքին հարցերով «գորշ կարդինալներ», Դուք ունեիք արտաքին հարցերի «կարդինալի» «կարգավիճակ», պահպանու՞մ եք դեռ այդ ստատուսը:**

-Կարծում եմ, որ «գորշ կարդինալի» մասին միֆը տարածել եւ տարածում են նրանք, ովքեր իրականում էին հենց այդպիսիք եւ կամ՝ ցանկանում էին այդպիսիք դառնալ: Ես պետական աշխատանք եմ կատարել: Այլ հարց է, որ այդ գործունեությունն, ի անհրաժեշտություն, երբեմն բաց-թափանցիկ է եղել, երբեմն՝ ոչ:

Ինչ վերաբերում է իմ ներկա ստատուսին, ապա դասավանդում եմ ԱՄՆ Միչիգանի համալսարանում, պրոֆեսոր եմ՝ հայ ժողովրդի ժամանակակից պատմության ամբիոնում: «Նույն պատմության» մասին գրում եմ գրքեր:

**-Դուք Ձեր պաշտոնը թողեցիք 1997-ի սեպտեմբերին. բավականին բուռն մի ժամանակաշրջանում: Ինչու՞:**

-Նախագահի գլխավոր խորհրդականի եւ նաեւ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը ես թողեցի այն ժամանակ, երբ արդեն եկել էր ԵԱՀԿ համանախագահների նոր առաջարկների փաթեթը, որն էլ սկզբունքորեն մենք ընդունել էինք: Դրանից հետո Տեր-Պետրոսյանը հանդիպեց համանախագահներին, եւ համարելով, որ ամեն ինչ ընթանում է նորմալ, երկու օր հետո ես թողեցի իմ պաշտոնները… Ինչու՞. անկեղծ ասած, հոգնել էի, կար նաեւ անձնական պատճառ… կինս վատառողջ էր:

**-Ներքին խմորումներ, շարժառիթներ չկայի՞ն:**

-Ոչ, ոչ, չկային այդպիսիք: Ես պարզապես այն ներքին զգացողությունն ունեի, որ ներկայացված փաստաթղթով մենք արդեն մոտեցել ենք հիմնախնդրի հնարավորինս լավագույն լուծմանը, նախագահն էլ ընդունել էր այդ առաջարկները, ուստի գտա, որ կարելի է արդեն հրաժարական ներկայացնել:

**-Կարծում էիք՝ ներկայացված առաջարկների փաթեթը կընդունվե՞ր նաեւ հանրության կողմից:**

-Ես մինչեւ հիմա էլ մտածում եմ, որ այն ընդունվե՛լ է հանրության կողմից: Աղմուկը հանրությանը չէր: Աղմուկը ներքին ուժերինն էր: Վարչակազմինը. նրանք դեմ կանգնեցին:

**-Կարծում եք՝ միայն նրա՞նք:**

-Գուցե դրսում էլ կուսակցություններ կային, որոնք կարող էին եւ հակադրվել:

**-Իսկ պետություննե՞ր:**

-Չգիտեմ: Բայց որոշում կայացնողը մենք էինք: Ես անվերապահորեն հավատում էի, որ մե՛նք պետք է որոշենք մեր շահերը, եւ այն օրերին ամեն բան պետք է անեինք դրանց հետամուտ լինելու համար… 1997-ից առաջ ընկած ժամանակահատվածում էլ բազմիցս հայտնվում էինք զանազան՝ մեզ համար ոչ ցանկալի կացությունների առջեւ՝ եւ ԱՄՆ-ի, եւ Իրանի, եւ Ռուսաստանի հետ. իրենք բաներ էին պահանջում, որոնք չէինք անում: Այնպես որ, անսովոր բան չէր, որ որոշ պետություններ հակադրվեին մեր քաղաքականությանը. միեւնույն է, մենք մեր քաղաքականությունն անում էինք:

**-Այսպիսով՝ միայն ներքին ուժերով մեզանում տեղի ունեցավ 1997-ի «հեղաշրջումը»:**

-Թերեւս վաղ է այդ պատմությունը «գրելը», բայց որ «շարժումը» ներքին էր, խիստ միանշանակ է: Իսկ թե այդ ներքին ուժերն արդյո՞ք ուրիշ ուժերի անունով էին «խոսում» կամ դրդմամբ, դա ես չեմ կարող ասել:

**-Իսկ ի՞նչ եք կարծում, նախագահ Տեր-Պետրոսյանի համար էլ անսպասելի էր այդպիսի շրջադարձը. սեպտեմբերին ի՞նքն էլ դեռ մտածում էր, որ տարբերակներից լավագույնն է ներկայացրել ԵԱՀԿ ՄԽ-ն, եւ այն որեւէ արգելքի չի հանդիպելու:**

-Այդ հարցով իրեն դիմեք:

**-Յոթ երկար տարիներ Դուք աշխատել եք իր հետ, չգիտե՞ք:**

-Պարզապես այդ մասին խոսելն իմ գործը չէ, այլ իր:

**-Եվ այնուհանդերձ:**

-… Թերեւս մտածում էր, որ կարող է անցկացնել:

**-Հանդիպու՞մ եք իրեն:**

-Միշտ:

**-Ե՞վ…**

-Ինչպես միշտ, ինձ համար ամենահաճելի հանդիպումներն են դրանք. չորս օր է Հայաստանում եմ, երկու անգամ արդեն տեսնվել ենք:

**-Ինչի՞ց եք խոսում:**

-Ամեն ինչից. աշխարհից, փիլիսոփայությունից, քաղաքականությունից, երբեմն Հայաստանի հարցերից, Սահմանադրությունից, միջազգային իրադարձություններից, գրականությունից ենք շատ խոսում, նոր լույս տեսած գրքերից:

**-Ինչպիսի՞ն է նախագահի «մարզավիճակը»:**

-«Մարզավիճակն» ի՞նչ է:

**-Ա՛, մենք հիմա արդեն Հայաստանում քաղաքականությունը «չափում» ենք «տուռնիկով, դահուկներով, բասկետբոլով»:**

-Հասկացա: Լավ մարզավիճակում է. անձամբ ես այդպես գտա:

**-Կվերադառնա՞:**

-Կարող են լինել պայմաններ, որ վերադառնա. մարդը դեռ «ջահել» է. ընդամենը վեց ամիս է ինձանից մեծ:

**-Ինքս ձեզ՝ երկուսիդ էլ, ավելի «երիտասարդ» կտայի… Եվ այնուհանդերձ, ի՞նչ ասել է «պայմաններ»:**

-Եթե զգա, որ ժողովուրդն իր անհրաժեշտությունն ունի եւ պատրաստ է ընդունել իր մոտեցումներն ու լուծումները, կվերադառնա: Եվ կամ, եթե զգա, որ տալու բան դեռ ունի հասարակությանը:

**-Մեր հասարակությունն, ինչպես ցույց տվեցին վերջին ընտրությունները, դեռ չի կորցրել սովետական երշիկի հուշը. գաղափարները նրան չեն հետաքրքրում՝ առայժմ: Սա՝ իմիջիայլոց: Ի դեպ, ասում են՝ Տեր-Պետրոսյանն էլ իր հերթին է շատ նեղացած:**

-Չէի ցանկանա այդ մասին խոսել:

**-Չե՞ք զգում՝ նեղացած է, թե ոչ:**

-Ես շատ բան եմ զգում, բայց ամեն զգացածս չեմ արտահայտում…

**-Խոսենք «ցանկալի» եւ «արտահայտելի» խնդիրներից. մինչ կհասնենք տարածաշրջան՝ Իրան-Ռուսաստան-Ադրբեջան, նախ հետաքրքիր է Ձեր գնահատականը Ղարաբաղյան հիմնախնդրի այսօրվա վիճակին. ասպարեզում է Ձեր կողմից ընդունված՝ «փուլ առ փուլի» նորօրյա «ընթերցումը»: Ի՞նչ կասեք համեմատական առումով:**

-Պետք է միանշանակ ֆիքսել հետեւյալը. շատ մեծ ժամանակ կորսվեց:

Եվ ապա, այն չափով, որքանով ծանոթ եմ այսօրվա գործընթացներին, կարելի է ասել, որ, այո, «նոր» կոչվող տարբերակն, իր սկզբունքային մոտեցումներում, շատ մոտ է 1997-ի փաստաթղթին:

Չգիտեմ, ի վերջո, վերջնական փաստաթուղթը երբ լինի, կունենա՞ 1997-ի բոլոր առավելությունները, թե ոչ, սակայն միանշանակ կարծում եմ, որ այդ փաստաթուղթը կարելի էր եւ շատ ավելի վաղ ունենալ:

Այս ընթացքում մի քանի տարբեր «ֆորմուլաներ» գործարկվեցին, եւ այնուհանդերձ, անցնող յոթ տարիներն ապացուցեցին, որ լավագույն

մոտեցումները 1997-ինն էին, քանզի վերջնական «հաշվեկշռում» կրկին հանգեցին դրանց:

Եվ այնուհանդերձ, գտնում եմ՝ որքան շուտ, այնքան՝ լավ: Տակավին այն կարծիքին եմ, որ Ղարաբաղի հարցը մեր երկրի՝ Հայաստանի համար եղել է եւ է՝ լուծման կարոտ թիվ մեկ հարցը:

**-Եվ այնուհանդերձ, «պտույտի» մեջ դրված տարբերակում Ղարաբաղի կարգավիճակն, ի տարբերություն 1997-ի, մնում է ոչ թե անորոշ, այլ՝ տասը-տասնհինգ (Մանն ասում է՝ թերեւս հարյուր) տարի հետո հանրաքվեով որոշվող:**

-Հանրաքվեի գաղափարը, որն ամրագրված է նոր առաջարկներում, եթե ընդունվի բոլոր կողմերից, «կիսափաթեթային» տարբերակ կստեղծի: Եթե հանրաքվեն ձեւակերպված է որպես Ղարաբաղի ժողովրդի ճակատագրի վերջնական արդյունք, որն ընդունելի է նաեւ միջազգային հանրության համար, այդ դեպքում, այո, լուծումը «կիսափաթեթային» է դառնում, եւ նույնիսկ՝ քիչ ավելին:

**-Դե, թե «այդպես», ապա ունենում ենք առավել դրական՝ «հաղթողակա՞ն» լուծում:**

-Եթե կարողանան մի կերպ հաջողացնել, միգուցե:

**-Կկարողանա՞ն:**

-Չեմ կարող ասել, եւ նաեւ վստահ չեմ, թե կկարողանան: Յոթ տարի հենց այնպես կորցնելը նշանակում է շատ բան կորցնել, մասնավորապես ժողովրդի համար:

**-Ինչու՞. տնտեսական աճ ունենք. «կովկասյան մեր վագրը մռնչում է», նույնիսկ այդ մռինչը Համաշխարհային բանկն է լսում. ոչ միայն լսում, այլեւ ֆիքսում է (շատերի կարծիքով՝ իրոնիայով, եւ այնուհանդերձ):**

-Ես երբեք շատ չեմ վստահում վիճակագրությանը: Եվ եթե անգամ այդ վիճակագրությունը ճիշտ է, այն հարաբերական արժեք ունի: Ասել կուզե՝ եթե տասը դոլարի վրա տասը տոկոս ես ավելացնում, համենայնդեպս, մեկ դոլար է: Եվ հետո՝ այդ աճը տնտեսագետները տարբեր ձեւերով են մեկնաբանում: Կարելի է երկրում տնտեսական աճ լինի, սակայն ժողովրդի կարգավիճակը չլավանա: Ամերիկայում հսկա հարստություն է դիզվել վերջին տասը տարիների ընթացքում, սակայն դրան զուգահեռ աղքատությունը շատացել է:

**-Իսկ Ադրբեջանը կհամաձայնի՞ հանրաքվեի այդ տարբերակին:**

-Ես վստահ չեմ: Բայցեւ՝ այնտեղ ուրիշ այլ հաշվարկներ էլ կան: Մեր պաշտոնյաների հայտարարություններից կարող եմ եզրակացնել, որ իրենք հույս ունեն, որ Ադրբեջանը կընդունի, կարելի է կարծել, որ որոշ ազդակներ տեսել են այդ առնչությամբ, սակայն մի քիչ դժվարություն ունեմ՝ համոզվելու տակավին, որ Ադրբեջանը կընդունի:

**-Իսկ ՃՄԽ դրական դրույթները. «բլե՞ֆ» են դրանք, թե՞ աշխատող տարբերակ են, ըստ Ձեզ: Վերջին շրջանում Ղարաբաղյան հիմնախնդիրն սկսել են համեմատել Կոսովոյի հետ, եւ տեսակետ կա, որ նույն ֆորմատով կարելի է եւ այս հակամարտության համար եւս լուծում գտնել:**

-Գիտեք՝ Կոսովոյի հետ համեմատությունն այնքան էլ սխալ չէ, թեեւ Կոսովոն Եվրոպա է:

15 նոյեմբեր, 2005 թ., «Ժամանակ»: Հարցազրույցը՝ Կարմեն Դավթյանի: